

վասն զի Տէր պաշտպան եղև ինձ 'ի նոցա-  
նէ, և ջարդեաց զսուրս նոցա, և հալեցան  
'ի վերայ երկրի իբրև զմում առաջի հրոյ:  
Եւ է այս բաւական, զի Տէր է պատերազ-  
մուղ զպատերազմն. և զուք խնդրեցէք զզ-  
նոսա, զի եղբարք ձեր են և արին հօր  
ձերոյ խորայեկն: — Եւ ասէ ցնա Հիմաւոն.  
Ընդէր տիկին մեր խօսի բարի վասն թշնա-  
մեաց մերոց. ոչ, այլ կոտորեսցուք զնոսա  
սրովք մերովք. վասն զի նոքա խորհեցան  
յաղագս ձեր և հօրն մերոյ խորայեկի, և  
վասն եղբօր մերոյ Յովսեփայ. սհա այս  
երիցս անգամ տիկին մեր և թագուհի դու  
ես: — Եւ ձգեաց զձեռն իւր Սասնէթ, կա-  
լաւ զմօրուացն նորա և համբուրեաց զնա,  
և ասէ ցնա. Մի երբեք զայդ առնես, եղ-  
բայր իմ, և չար փոխանակ չարի հատու-  
ցանես. Տեսան տացես թշնամութիւն, և  
նոքա եղբարք ձեր են, և ծնունդք հօր ձե-  
րոյ, և փախեան 'ի Հրէաստանէ՝ յերեսաց  
ձերոց: — Եւ մատեաւ առ նա Ղէի, և համ-  
բուրեաց զձեռս նորա, և իմացաւ և թէ ապ-  
րիցուցանել ի պամի զեղբարս իւրեանց: Եւ  
նորա էին 'ի պուրակս հիւրժող եղևգանն.  
և ծնողացն և եղբարցն նոցա. ոչ ծանոյց  
զնոսա, քանզի երկեաւ մի գուցէ քարկու-

թեամբ իւրեանց սպանանիցեն: — Եւ որդին  
փորսւմնի յարեաւ յերկրէ և նստաւ. և  
խաղայր արինն ընդ ականջս և ընդ բե-  
րանն նորա: Եւ ընթացաւ առ նա Բենիա-  
մին, և առ զսուսերն նորա, և ձգեաց 'ի  
պատենից իւրոց, և կամէր սպանանել զնա՝  
'ի հարկանել 'ի լանջմն որդւոյն փարսու-  
նի: — Եւ իրթնացաւ առ նա Ղէի, և կալաւ  
զձեռանէ նորա և ասէ. Եղբայր իմ, մի առ-  
նիր զգործս զայդ սրիկ. վասն զի մեք եմք աս-  
տուածապաշտք, և ոչ վայելէ աստուածա-  
պաշտի հատուցանել շար փոխանակ չարի.  
և ոչ ումեք՝ անկելոյ 'ի ձեռս ուրուք կոխել  
կամ նեղել զթշնամին՝ մինչև 'ի մահ: Եւ  
այժմ դարձո զսուր քո 'ի տեղի իւր. եկ  
օգնեա ինձ, և բժշկեսցուք զնա 'ի վիրացն  
նորա, և կեցցէ և եղիցի մեր սիրելի. յետ  
այսորիկ՝ և փարսուոն է որպէս զհայր մեր:  
— Յարոյց Ղէի որդին փարսուոնի, և ջըն-  
ջեաց զարինն յերեսաց նորա, և պատեաց  
փարսամակաւ զերեսս նորա, և եղ զնա 'ի  
վերայ ձիոյն իւրոյ, և տարաւ առ հայր իւր  
փարսուոն, և պատմեաց նմա զամենայն  
բանս զայսորիկ: — Եւ յարեաւ փարսուոն յա-  
թոռոյն, և երկիր եպագ Ղէեայ: Եւ յեր-  
րորդում աւուր մեռաւ որդին փարսուոնի:

## ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Իտալացի վարժապետն Ոսկար Կըլեցոյ. ասպետ և  
սպայ ծովային զինուորութեան, 'ի Յի փեարուարի,  
Միլանո Վիլա-Ռոմի Եւրոպին մէջ խօսեաց զեղեցիկ  
ճառ. որ «Կերկայ ժամանակիս Սղաղութեան (կա-  
պեղաբերիկի դրոթիւն) և անոր վերածմանց օգտա-  
կարութեանց վրայ՝ զինուորական և նաւական վարչու-  
թեանց շրջանին մէջ» 1 — Ճառախօսն յետ ցոյցանելու՝  
թէ ինչպէս ուսմական ընդհանուր թիւր բարեւում մի  
է՝ բազմաց՝ Սղաղութեան վրայ ունեցած դադաւարն,  
որպէս թէ միայն ատենից մէջ խօսումներն 'ի գրի  
առնելու նպատակին կը ծառայէ, ուստի և աւելաւթիւ  
անձանց միայն վերապահեալ և օգտաւէտ, կ'անցնի ա-  
պացուցանելու՝ թէ օգտակար է այն առհասարակ ամէն  
անձի՝ որ կը վերաբերի քաղաքակիրթ ընկերութեան  
դասուն, իբրև մատուցած անասական, ուսումնական  
և նիւթական բազմազանի ծառայութեամբք, և թէ ինչ-

պէս այս իւր յատկութեանց նեղեանք է՝ ոչ միայն եւ-  
րոպական ամէն լեզուաց վերածուած լինելն, այլ և  
սոսնական, լատինական և ճապոնական՝ նին և ազգուս-  
կան լեզուաց: — Ճառախօսն ընդարձակօրէն կը խօսի  
ճապոնական վերածման մասին, ժամուցանելով նաև եր-  
բա մերձաւոր նշատարակումս: — Կ'անցնի հետև ուրեմն  
հետեւելու Սղաղութեան յատկութեանց, նպատակին և  
օգտակարութեանց վրայ, յորս մանրամասն մէջ բերե-  
լով 'ի մասնաւորի՝ այս վերջի տարիներու մէջ 'ի Չաղ-  
դիս, 'ի Գերմանիա, յԱւստրիա և յԻտալիա՝ նորա մա-  
տուցած ծառայութիւններն ցամաքային և ծովային զի-  
նուորութեան մէջ, բազմաթիւն ուկնդրաց ծափակա-  
րութեամբք կը կնքէ իւր ճառը, սոյն բարեբար արուես-  
տին համախաբարկեալ տարածման համար յայտնած  
Ընթմ մազթմաքներով:

Հ. Ա. Թ.